

**ՓՈՐՁԱՔՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ
ԿԱՐԳ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը կարգավորում է լիազորված մարմնի կողմից տրված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունները /այսուհետ՝ եզրակացություն/ ուժը կորցրած ճանաչելու ժամկետների և կարգի գործընթացի հետ կապված հարաբերությունները:
2. <<Երջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ Օրենք/ 21-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերում սահմանված դեպքերում Փորձաքննական կենտրոնը՝ լիազոր մարմնի հանձնարարականով, ձեռնարկողին ծանուցում է համապատասխան պահանջների և դրանց իրականացման ժամկետների, ինչպես նաև նշված պահանջները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու անհրաժեշտության և դրանց հիմնավորումների վերաբերյալ:
3. Ծանուցման մեջ նշվում են եզրակացության ուժը կորցրած ճանաչելու, կամ գործունեության դադարեցման պայմանների կամ առաջադրվող նոր պայմանների մասին օրենքով սահմանված հիմքերը, դրանց իրականացման ժամկետները, որը չի կարող ավել լինել քան 60-աշխատանքային օրը:
4. Սահմանված ժամկետում պայմանները և պահանջները չկատարելու դեպքում լիազոր մարմնը ուժը կորցրած է ճանաչում իր տված փորձաքննական եզրակացությունը՝ սույն կարգի 5-րդ կետով սահմանված կարգով:
5. Փորձաքննական կենտրոնը՝ եզրակացության ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ գեկուցագիրը՝ համապատասխան հիմնավորումներով ներկայացնում է լիազոր մարմնին, որը 10 աշխատանքային օրյա ժամկետում ուժը կորցրած է ճանաչում եզրակացությունը, այդ մասին փորձաքննական կենտրոնը՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում, գրավոր ծանուցում է ձեռնարկողին, ազդակիր համայնքին:

ՓՈՐՁԱՔՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

6. Եզրակացությունն ուժը կորցրած է ճանաչվում Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի, 1-ից 5-րդ կետերով սահմանված դեպքերում:
7. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերում նշված դեպքերում ազդակիր համայնքը կամ հանրությունը այդ մասին գրավոր կարող են տեղեկացնել լիազոր մարմնին, որը ստուգումներ իրականացնելու հանձնարարական է տալիս Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությանը (այսուհետ՝ տեսչություն):
8. Տեսչությունը, ստուգման ընթացքում Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով նախատեսված խախտումներ հայտնաբերելու դեպքում խախտումները վերացնելու հանձնարարական է տալիս ստուգվող սուբյեկտին՝ դրանում նշելով խախտումները վերացնելու ժամկետը և խախտումները չվերացնելու դեպքում լիազոր մարմնի՝ եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու իրավասությունը:
9. Սույն կարգի 9-րդ կետով սահմանված հանձնարարականի ժամկետում խախտումները չվերացվելու դեպքում լիազոր մարմնին ուժը կորցրած է ճանաչում եզրակացությունը:

10. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով կամ Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով սահմանված դեպքերում համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու կամ էկոլոգիական նոր գործոններն ի հայտ գալուց հետո եռամսյա ժամկետում փորձաքննական կենտրոնը վերլուծում է լիազոր մարմնի կողմից տրված եզրակացությունները:

11. Եթե վերլուծության արդյունքում պարզվում է, որ Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ 5-րդ կետերում նշված պայմաններում գործունեության շարունակման դեպքում շրջակա միջավայրին կարող է հասցվել զգալի վնաս՝ բայց սահմանված թույլատրելի նորմաների, եզրակացությունը, սույն կարգի 5-րդ կետով սահմանված կարգով, ուժը կորցրած է ճանաչվում:

12. Եթե վերլուծության արդյունքում պարզվում է, որ շրջակա միջավայրի պահպանությունն ապահովելու համար անհրաժեշտ է գործունեությունում կատարել ամբողջական կամ մասնակի փոփոխություններ, իրականացնել առանձին միջոցառումներ կամ ձեռնարկումներ, ապա փորձաքննական կենտրոնը այդ մասին գրավոր հիմնավորումներով տեղեկացնում է ձեռնարկողին:

13. Փորձաքննական կենտրոնի պահանջներին համապատասխան, Ձեռնարկողը փաստաթղթերում պարտավոր է կատարել ամբողջական կամ մասնակի փոփոխություններ, նախատեսել առանձին միջոցառումներ կամ պահանջվող այլ ձեռնարկումներ, և եռամսյա ժամկետում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը վերաբերող լրամշակված փաստաթղթերը՝ համապատասխան փոփոխություններով ներկայացնել լիազորված մարմին: Չներկայացնելու դեպքում եզրակացությունը ուժը կորցրած է ճանաչվում:

14. Լրամշակված փաստաթղթերի հիման վրա լիազոր մարմինը կայացնում է համապատասխան որոշում՝ տվյալ գործունեության շրջակա միջավայրին վերաբերող գործընթացների հետագա կարգավորման վերաբերյալ և այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում ձեռնարկողին:

15. Եթե Նախատեսվող գործունեության իրականացումը, Օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո մեկ տարվա ընթացքում, ապա եզրակացությունը կորցնում է ուժը, և պահանջվում է նոր փորձաքննական եզրակացություն: